22 ապրիլի 2014 թվականի N 332 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 1075-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---------------------------------------------------------------------------------------------------

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի զարգացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1075-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի 4-րդ՝ «Կատարման ժամկետը» սյունակի «2014 թ.» բառերը փոխարինել «2015-2016 թթ.» բառերով,

2) 2-րդ կետի 2-րդ՝ «Միջոցառման անվանումը՝ ըստ ոլորտների» սյունակից հանել «Գանձաքարի գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակում-11168.0» բառերը,

3) 6-րդ կետի 6-րդ՝ «Պատասխանատու կատարողը» սյունակը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ Տավուշի մարզպետարան, Դիլիջանի քաղաքապետարան»,

4) 9-րդ կետի 6-րդ՝ «Պատասխանատու կատարողը» սյունակը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Ասիական զարգացման բանկ (համաձայնությամբ), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ)»,

5) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11. | Դիլիջանի քաղաքային համայնքի գերեզմանատների շահագործման խնդիրների կանոնակարգում | գերեզմանատների կառուցապատման հատակագծերի մշակում, բարեկարգման աշխատանքների իրականացում | 2014-2016 թթ. բարեկարգում, հսկողություն յուր. տարի | 15000,0 - յուր. տարի սպասարկման համար (սպասարկումը համայնքի միջոցներով) (համայնքի բյուջեով նախատեսվել է 18000.0 հազ. դրամ 2014-2016 թթ. համար, յուր. տարի 6000.0 հազ. դրամ 6 գերեզմանատան հսկողություն) | Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ Տավուշի մարզպետարան<br><br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն |

»,

6) 23-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23. | Դիլիջանի հանրակրթական օբյեկտների, պետական քոլեջի վերանորոգում<br><br>պետական քոլեջի, Դիլիջանի ավագ դպրոցի և 4-րդ հիմնական դպրոցի վերազինում համապատասխան նյութատեխնիկական բազայով (արվեստ, մարզական և լաբորատոր գույք,) | դպրոցահասակ երեխաներին վերանորոգված, ջեռուցվող, լուսավոր դասասենյակներով ապահովում<br><br>դպրոցահասակ երեխաներին տեխնիկապես հագեցած դասասենյակներով ապահովում | 2015-2017 թթ. | 13 օբյեկտ, որից երկուսը (1500000.0) ընդգրկված են «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման մեջ ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ, միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցություն | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ Տավուշի մարզպետարան<br><br>Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br><br>ՀՀ Տավուշի մարզպետարան<br><br>Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ |

»,

7) 41-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 41. | Դիլիջան քաղաքի նոր աղբավայրի տարածքի ընտրություն, ինժեներաերկրաբանական հետազոտություն և նախագծի մշակում, գործող աղբավայրի կոնսերվացման նախագծի մշակում | նոր աղբավայր Դիլիջանի և Տավուշի մարզի համար, աղբահանության և աղբի վերամշակման ծրագրի մշակում | 2014-2015 թթ. | 50000.0<br>6100.0<br>մասնակի ֆինանսավորում ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնի կողմից | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br><br>ՀՀ Տավուշի մարզպետարան<br><br>Դիլիջանի քաղաքապետարան (համաձայնությամբ) |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ